

1. Հաշվել՝  $\left| 6\frac{3}{7} - \left( 3,5 + 1\frac{1}{3} \right) : \frac{1}{6} \right|$ :

**Պատ.**՝  $\frac{158}{7}$

2. Վինի Թուխը, Խոզուկը, Ճագարը և Իշուկը կերան մի տակաոռիկ մեղր: Ընդ որում Խոզուկը կերավ Վինի Թուխի կերածի  $\frac{1}{3}$  չափով, իսկ Ճագարը՝ Վինի Թուխի չկերածի  $\frac{1}{3}$  չափով: Իշուկը կերավ մեղրի  $\frac{1}{3}$  մասը: Մեղրի ո՞ր մասը հասավ Ճագարին:

**Պատ.**՝  $\frac{2}{9}$

3. Գտնել այն քառանիշ թվերը, որոնց առաջին երեք թվանշանների արտադրյալը հավասար է 56, իսկ վերջին երեք թվանշանների արտադրյալը՝ 224:

**Պատ.**՝ 1784, 1874, 2478, 2748

4. Դասարանի աշակերտների 35 %-ը և ևս 2 աշակերտ խաղում են շախմատ, իսկ  $\frac{2}{5}$  մասը և ևս 8 աշակերտ՝ վոլեյբոլ: Քանի՞ աշակերտ է սովորում դասարանում, եթե դասարանի յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է այդ խաղերից միայն մեկին:

**Պատ.**՝ 40

5. Խանութում կար 2,25 տ խնձոր և 1,2 տ տանձ: Օրական վաճառվում էր 125 կգ խնձոր՝ կիլոգրամը 250 դրամով, և 120 կգ տանձ՝ կիլոգրամը 300 դրամով: Նվազագույնը քանի՞ օրում խնձորի վաճառքից ստացված հասույթը /գումարը/ կգերազանցի տանձի վաճառքից ստացված հասույթին:

**Պատ.**՝ 12


6. Շրջանագծի վրա վերցրել են 7 կետ, որոնցից երկուսը ներկել են կարմիր գույնով, երկուսը՝ կապույտ գույնով, իսկ երեքը՝ ծիրանագույն: Գտնել այն եռանկյունների քանակը, որոնց գագաթները նշված կետերն են և, որոնց գագաթներից գոնե երկուսը ներկված են նույն գույնով:

**Պատ.**՝ 23

7. Արամը գրեց 120 հատ սովորական կանոնավոր կոտորակ՝  $\frac{1}{2}, \frac{1}{3}, \frac{2}{3}, \frac{1}{4}, \frac{2}{4}, \frac{3}{4}, \frac{1}{5}, \frac{2}{5}, \frac{3}{5}, \frac{4}{5}, \dots$ , որից հետո այն կոտորակները, որոնք փոքր են  $\frac{1}{2}$ -ից, ներկեց կարմիր գույնով, իսկ մնացած կոտորակները՝ կապույտ գույնով: Ո՞ր գույնի կոտորակներն են շատ և որքանո՞վ:

**Պատ.**՝ Կապույտը 8-ով

8. 12 սմ, 9 սմ, 8 սմ և 6 սմ կողմերով քառակուսիները դասավորված են այնպես, ինչպես ցույց է տրված նկարում: Պարզվել է, որ գորշագույն մասերի մակերեսների գումարը կրկնակի մեծ է սև մասերի մակերեսների գումարից: Գտնել սպիտակ մասերի մակերեսների գումարը:



**Պատ.**՝ 26